ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
28.02.2023թ. թիվ 5/25-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

_____ Սիմոն Բաբայան

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

ք. Երևան,
2023թ.

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույնով իրավական ակտով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի **(այսուհետ նաև՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա)** ունկնդիրների մասնագիտական ուսուցման և փաստաբանների վերապատրաստման գործընթացի կազմակերպման ընդհանուր ուղենիշները **(այսուհետ՝ Ուղենիշներ):**

2. Ուղենիշները հիմք են ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից վերապատրաստման և ուսումնական պլանների հաստատման համար:

II. Փաստաբանների վերապատրաստում

3. ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից հաստատվող վերապատրաստման պլանը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) վերապատրաստման դասընթացների ուղղվածությունները՝ քաղաքացիաիրավական ուղղվածություն, քրեաիրավական ուղղվածություն և ընդհանուր մասնագիտացում.
2) վերապատրաստման թեմաների անվանումները.
3) վերապատրաստման դասընթացի տևողությունը՝ ըստ ակադեմիական ժամերի (մեկ ակադեմիական ժամը քառասուն րոպե):

4. ՀՀ փաստաբանական ակադեմիան վերապատրաստման պլանը կազմելիս կարող է հաշվի առնել փաստաբանների առաջարկները:

5. ՀՀ փաստաբանական ակադեմիան կարող է կատարել վերապատրաստման գործընթացի գնահատում՝ փաստաբանների շրջանում հարցումներ կազմակերպելու միջոցով:

III. Ունկնդիրների ուսուցում

6. ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների ուսուցումը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի դրա արդյունքում վերջիններս ստանան փաստաբանի մասնագիտությամբ աշխատելու համար բավարար գիտելիքներ և հմտություններ:

7. Ուսումնական պլանները պետք է կազմվեն մասնագիտական ուղղվածությանը համապատասխան և սահմանեն տեսական ուսուցման փուլում պարտադիր և օժանդակող դասընթացների անվանումը, ակադեմիական ժամաքանակը, ինչպես նաև գործնական ուսուցման փուլի հիմնական ծավալը:

8. Դասընթացները բովանդակային առումով չպետք է կրկնեն բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկաների բովանդակությունը:

9. Պարտադիր դասընթացների առարկայական ծրագիրը պետք է պարունակի տեղեկություններ դասընթացի անվանման, թեմաների, ժամաքանակի

և քննության ձևաչափի մասին:

10. Օժանդակող դասընթացների առարկայական ծրագիրը պետք է պարունակի տեղեկություններ դասընթացի անվանման, թեմաների և ժամաքանակի մասին:

11. ՀՀ փաստաբանական ակադեմիան կարող է կատարել ուսումնական գործընթացի գնահատում՝ ունկնդիրների շրջանում հարցումներ կազմակերպելու միջոցով: